

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԻՆԱՍԻ ՄԻՆԱՍՅԱՆ
(ծննդյան 70-ամյակի առիթով)



Սիրանուշ Մինասի Մինասյանը ծնվել է 1939թ. Հունաստանի Սալոնիկ քաղաքում: 1946թ. նրանց ընտանիքը ներգաղթել է Հայաստան և բնակություն հաստատել Երևան քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1956թ. ընդունվել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը, ավարտել այն գերազանցության դիպլոմով 1961թ. և անմիջապես աշխատանքի է անցել նույն ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես լաբորանտ-րիայի վարիչ: 1962–1965թթ. եղել է նույն ամբիոնի ասպիրանտ, իսկ 1964 թվականից աշխատել է նաև որպես ասիստենտ: 1966թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1987թ. դոկտորական ատենախոսություն:

1967թ. թվականից ամբիոնում աշխատել է որպես ավագ դասախոս, իսկ 1969–1987թթ. դոցենտ: 1988թ. Ս. Մինասյանը ամբիոնում զբաղեցրել է պրոֆեսորի պաշտոնը, իսկ 1991–2009թ. եղել է այդ ամբիոնի վարիչը: Այժմ նա նույն ամբիոնի պրոֆեսորն է և գիտահետազոտական թեմայի գիտական ղեկավարը:

Դեռևս ասպիրանտական տարիների ընթացքում Ս. Մինասյանն իրեն դրսևորել է որպես հետադասական, նպատակասլաց գիտաշխատող: Նրա կողմից մշակված ոսկրածուծի ու որոշ միկրոտարրերի համատեղ ազդեցությունը ճառագայթահարված կենդանիների վրա զգալի չափով բարձրացնում է նրանց կենսունակությունն ու նյութափոխանակության որոշ օղակների մակարդակը:

Մեր հանրապետությունում և ԱՊՀ երկրներում գիտական լայն հասարակայնությանը հայտնի են Ս. Մինասյանի ուսումնասիրությունները թրթռման ազդեցության պայմաններում օրգանիզմի հարմարողական ռեակցիաների կենտրոնական և ծայրամասային կարգավորիչ մեխանիզմների բացահայտման ուղղությամբ: Ժամանակակից էլեկտրաֆիզիոլոգիական, նեյրոդեղաբանական և կենսաքիմիական մեթոդների համատեղ կիրառմամբ Ս. Մինասյանի կողմից բացահայտվել են թրթռման երկարատև ազդեցության պայմաններում գլխուղեղի յուրահատուկ և ոչ յուրահատուկ համակարգերի ու սիմպաթադրենալային համակարգի դերն օրգանիզմի հարմարողական մեխանիզմներում:

Գործնական մեծ նշանակություն ունեն Ս. Մինասյանի կողմից ղեկավարվող գիտական խմբի անդաստակային վերլուծիչի տարբեր օղակների նեյրոնային կազմակերպման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները:

Ներկայումս այդ խմբի կողմից ուսումնասիրվում է թրթռային ախտաբանության շտկումը բուսական խթանիչներով, գերկարճալիք էլեկտրամագնիսական ճառագայթների և ենթատեսաթմբի պրոլինով հարուստ նեյրոպեպտիդի (PRP-1) կիրառմամբ: Ուսումնասիրվում են նաև հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, ԲՈւՀ-երում սովորողների հոգեմարմնաֆիզիոլոգիական ցուցանիշները ուսումնական գործընթացի և քննական լարվածության պայմաններում:

Գիտական գործունեությանը զուգընթաց պրոֆ. Ս. Մինասյանը վարում է մանկավարժական և գիտակազմակերպչական գործունեություն: Նրա ղեկավարությամբ բազմաթիվ ասպիրանտներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ, որոնցից մի քանիսը հաջողությամբ աշխատում են հանրապետության և արտերկրի գիտական ու ուսումնական հաստատություններում:

Ս. Մինասյանը շուրջ 300 գիտական աշխատանքների հեղինակ է: Նրա կողմից հրատարակվել են 2 մենագրություն, 11 ուսումնամեթոդական ձեռնարկ հայերեն և ռուսերեն լեզուներով, 3 մեթոդական ուղեցույց: Ս. Մինասյանը նաև միջնակարգ դպրոցների 8-րդ դասարանում դասավանդվող «Մարդ» դասագրքի հեղինակն է:

Վերջին տասնամյակի ընթացքում Ս. Մինասյանի համահեղինակությամբ լույս է ընծայվել 6 դասագիրք՝ Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքները (1998), Ռատիոկենսաբանություն (2005), Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա (2006, 2007), Առողջագիտություն (2008) և Մարդու ֆիզիոլոգիա (2009):

Բազմաբնույթ է նաև Ս. Մինասյանի հասարակական գործունեությունը: Նա բազմիցս եղել է ուսանողական լավագույն աշխատանքների հանրապետական և միութենական մրցութային հանձնաժողովների անդամ, դպրոցականների «Կենսաբանություն» մասնագիտական օլիմպիադայի հանրապետական ժյուրիի նախագահ, Գիտելիք ընկերության կենսաբանություն մասնագիտության հանրապետական բաժանմունքի նախագահ:

Նա երկար տարիներ դասախոսությունների ցիկլ է կարդացել Երևանի և հանրապետության տարբեր քաղաքների կենսաբան ուսուցիչների համար, ավելի քան 15 տարի վարել է հեռուստահաղորդումներ աշակերտների համար «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ:

Պրոֆ. Ս. Մինասյանը ՀՀ ԳԱԱ բժշկական գիտությունների գծով գիտական խորհրդի, ՀՀ ֆիզիոլոգների ընկերության նախագահության, ՀՀ ԿԳ նախարարության «Կենսաբանություն» գիտամեթոդական խորհրդի, ուղեղի միջազգային կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի, ԱՄՆ-ի ֆիզիոլոգների ընկերության և Էկոլոգիայի ու կենսագործունեության անվտանգության գիտությունների միջազգային ակադեմիայի հանդեսի և ԵՊՀ «Գիտական տեղեկագիր» հանդեսի խմբագրական կոլեգիաների անդամ է:

Ս. Մինասյանն իր գիտամանկավարժական և հասարակական գործունեության ընթացքում պարգևատրվել է Երևանի պետական համալսարանի, ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ կրթության նախարարության, ԽՍՀՄ «Գիտելիք» ընկերության պատվոգրերով և մեդալներով:

Մադթենք անխունջ գիտնական և մանկավարժ Սիրանուշ Մինասի Մինասյանին քաջառողջություն և երկար տարիների բեղմնավոր գործունեություն:

Տ. Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն, կենսաբանության ֆակուլտետ